Ալեքսանդր Ծատուրյան

Հայ երգչին

Դա՞ռն է մեր կյանքը, տխո՞ւր մեր օրեր,
Չկա՛ մեզ հանգիստ, չկա՛ խնդություն.
Միայն տառապանք և անվերջ վշտեր
Մեր հեգ սրտերից քամում են արյուն…
Նայում ենք վերև ամպամած երկինք,
Նայում ենք ներքև շիրիմ ոտքի տակ,
Նայում ենք մեր շուրջ ահեղ փոթորիկ,
Իսկ մեր ձեռքերին շղթա ու կապանք…
Եվ որպես խավար, մռայլված գիշեր,
Անզոր ողբում են մեր սիրտն ու հոգին.
Եվ քանի՜ ըղձեր, քանի՜ խորհուրդներ
Ճնշված նիրհում են մեր կրծքի տակին…

Դա՞ռն է մեր կյանքը, տխո՞ւր մեր օրեր,
Մեզ կաշկանդել է ստրկության շղթան.
Օ՜, երգի՜չ, երգի՛ր մեզ հզոր երգեր,
Բոցավա՞ռ երգեր ոգևորության:
Երգի՛ր մեզ անահ, կորովի ձայնով
Փառք և հաղթանակ փայլուն գործերի,
Երգի՛ր, որ ազատ քնարիդ լարերով
Ցնցես թելերը թըմրած սրտերի…

Երգի՛ր մեզ այն հին երգը դարևոր,

Որ մի ժամանակ թնդալով ուժգին
Մարտի փոթորկում վսե՜մ, փառավո՜ր
Դափնիք էր ձոնում մեր քաջ պապերին…

Երգի՛ր… Թո՛ղ քո երգն անկեղծ, ոգելից,
Որպես ջերմ աղոթք հայրենասերի,
Ցրվե մռայլը վհատ սրտերից,
Բանա մեզ աղբյուր ոսկի՜ հույսերի…
Թո՛ղ քո ոգեշունչ, կարող երգերով
Ծովի պես հուզվի հայրենի աշխարհ.
Թո՛ղ նոքա մեր ծանր ուղին հարթելով,
Հային պատրաստեն նոր կյանքի համար…
Դա՜ռն է մեր կյանքը, տխո՜ւր մեր օրեր,
Մեզ կաշկանդել է բռնության շղթան.
Օ՜, երգի՛չ, երգի՛ր մեզ հզոր երգեր,
Բոցավա՜ռ երգեր ոգևորության…